



95. ԹԱՔԱՎՈՐՆ ՈՒ ՆԸՂԱՐԱԶԻՆ

Ժուկով-ժամանակով մին կեղըմ ապրիլիս ա ինըմ Սամսոն անըմով մին տղա՝ բոյը՝ չիմչնտ, ոնց որ միննայենց ղավախը, ուննգըր-ոսւշտըր ոնց որ նորած լիսնյագ, Սըղըմոն Իմաստունի մնան խելունք, համա ինչ կանես, որ վերջին օրվա ախկաղն ա ինըմ: Հերը-մեր չի ինըմ, քիր ու ախպեր չի ինըմ, դարաղամը՝ դիամաթ:

Սաղ օրը նըղարա յա ածըմ, նհետն էլ քոլքոլի մնան ջուռա-ջուռա հավեք ա չըվչըվըցնըմ, ով որ յսըմ ա, արմանք-դարմանք ա կըտորըմ, մին քանի կնպեկ ա քըցըմ ընդրան: Սըհենց մին օր կուշտ, մին օր սոված, մին օր տաք, մին օր մըսած ապրըմ ա էտ թնուլան տղեն:

Օրերից մին օր էլ Սամսոնըս ուրանց կեղը թողըմ ա, քինըմ քաղաք: Քաղաք մի ասիլ, մին հրաչկ ասա. քոլչեքը լեն ու բոլ, ամման մին տունը մին դնչննգ ամարաթ, բաղ ու բաղավաթի մեչին կորած: Սաղ օրը պերանը պնց, չորս դոլը խըլչկոտալով ման ա կնլիս էտ քաղաքըմը, համա հենց որ հըսնըմ ա մին նախշուն, մին կուպ-ճիկ մեյդանի, նոր միտն ա ընգնըմ, որ հաց չի կերել, փող էլ ունի ոչ: Կաղնըմ ա էս մեյդանըմը, նըղարեն ածըմ ու եղնիցը չըվչըվըցնըմ:

Մարթիք վըհաքվըմ են էս նոր արչն ընգած երքիչի կլխին, աչկերը պլըշըմ են հու անգաճ տինըմ: Ոչ մինի սնրնողնըն էլ ա կնլիս չի, որ ախըր էտ թաքավորական մեյդանն ա, որ թաքավորն էլ ա ուրն ամարաթի պըտըրհանիցը կախ ընգած թըմաշա անըմ:

Եփ Սամսոնը պըծընըմ ա ածիլը, ժողովուրթը մին խելնք ծափ ա տալիս հու փող ա որ լցնըմ ա նըղարաչու փափաղի մեչը:

—Այ քեզ անդանդ մարթ, —մըտածըմ ա թաքավորը, իրեք անքամ ծափ ա տալիս, նի յա մըննըմ դուլլուղչիներիցը մինը, կլթիս ա տալի հու ըսպասըմ հրամանքի:

—Շո՛ւտ արա, ըստեղ պե՛ր էտ նըղարաչուն:

Սամսոնը ուրն փողերն ա վհաքիլիս ինըմ, եփ թաքավորի դուլլուղչին կնլիս ա ընդան տանըմ ամարաթը:

Թաքավորը հենց որ տեսնըմ ա Սամսոնին, հայիլ-մայիլ ա կըտորըմ բոյ ու բուսաթիցը, չենք ու չնորքիցը, նստըցնըմ ա կշտին ու ասըմ ա. —Հնմ լնվ ածըմ ես, հնմ դնչննգ չըվչըվըցնըմ, ապրե՛ս:

Համա ես էլ եմ ուզում քե մնան սազանդար ինեմ: Եկ մին օրով ես իմ չորերը քե տամ, տո՛ւ էլ քունը իդ տու: Թող մին օրով ես էլ քե մնան անդարդ սազանդար տանոնամ, իսկը տո՛ւ մին օրով թաքավոր ինի-լի Համը տե՛ս, տե՛ս իչքան տըժար ա, իչքան ծանդըր ա հու տանդը: Ըտենց էլ անըմ են:

Թաքավորը Սամսոնի ճո՛ւլերը հաքին, ընդա նըղարեն վեկա-լած տո՛ւս ա կանխ մեյդանը հու ըսկսըմ ա նըղարին դըփ հա դըփ, նհետն էլ ուզըմ ա չըվչըվըցնի, համա ակոեվի կըոոոց ա տո՛ւս կանխ, ջամահաթը թողըմ ա ոեհելը քաչըմ, հու ոչ մինը մին քոո կանպեկ էլ ա տալիս չի:

Ըստան թողանք ըստեղ, մենք խանրըր տանք Սամսոնիցը: Թա-քավորի ոսկահըրած թաքը կլխին, ծիրանին ուսին քցած, կանչըմ ա նանգիր-վանգիրներին հըրամանք ա տալիս, թա՛ դուսսաղներըմը իչ-քան մարթ կա էս սըհաթիս պա՛ց թողեք, կուշտ ու կուռ հա՛ց տվեք ուտեն, քինան ռըանց պանին: Քաղաքըմը իչքան ախկաղ մարթ կա, մին-մին ոսկի տվեք, թո ապրեն, կեղերըմը իլած ախկաղներին մին-մին օրավար հող տվեք, թո վարուցանքս անեն, ապրեն:

Նանգիր-վանգիրնին շատ են դարմանըմ, թա՛ էս իչ պան ա, թա-քավորը հու խեղքը թոցրել չի: Համա սուսուփուս հըրամանքը կա-դարըմ են: Զարմանքը ժողովուրթին էլ ա տանըմ, թա՛ էս ինչ ունհմ ա ընգել թաքավորի սիրտը, որ ըստենց ծեռնապանց ա տանել, հա-մա դե ով ռըան փխը կուզի:

Եփ ընգան ա տանըմ, թաքավորը ուզըմ ա մըննի ամարաթը, համա դուլլուղչիքը թողըմ չեն: Թաքավորը փըրփըրըմ ա, կըտա-ղըմ, կո՛ոկո՛ոըմ ա, թա ես ծեր թաքավորն եմ, համա լսողն ով ա, վհատացողը՝ ով:

Խանրըր տանըմ են Սամսոնին:

—Թաքավո՛րն ապրած կենա,—ասըմ են,—էն նըղարաչին գիժվել ա, խոսկի տակին-կլխին ասըմ ա ես ծեր թաքավորն եմ: Ի՞նչ անենք:

—Ասըմ ա թաքավո՞րն եմ,—աջըղվըմ ա Սամսոնը,—իրես ա առել էտ ախմախը, չո՛ւտ քամակին տվեք տո՛ւս արեք, թա՛ որ էլի կողը հըստըցնի, տանտանկ կլոխը կըտըք:

Ախմախ թաքավորի կլոխը կըտըմ են, իսկը նըղարաչին թա-քավոր տանոնմ չենքով-չնորքով կառավարըմ ա ախչարքը, չեն պահըմ: Եղով փսակվըմ ա մին շարմաղ ախճկա հետ, օխտն օր, օխտը քչեր հըրսանիք են անըմ, էտ հըրսանիքին ինձ էլ ին կանչել, համա կարացի ոչ թա՛ քինամ:

Երգընքեն մին կո՛ք խնձոր ընգնի, չիմ ընդանց, ով էտ հըրսըն-քըմը իլել չի: